## ПРОБЛЕМА ПОВЫШЕНИЯ ПРОФЕССИОНАЛЬНОЙ КОМПЕТЕНТНОСТИ ПЕДАГОГИЧЕСКОГО СОСТАВА В СИСТЕМЕ ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ

*Ц. Ж. АСАТРЯН*

В статье представлена проблема совершенствования профессиональной компетентности преподавателей в качестве важнейшего условия обеспечения качества образования. Автор статьи представил краткий очерк точек зрения различных специалистов в литературе, связанных с профессиональным моделированием преподавательского состава, пытаясь организовать и уточнить требования, предъявляемые преподавательскому составу университета, и профессиональную компетентность, обусловленную этими требованиями.

## PROBLEM OF INCREASING PEDAGOGICAL PROBLEM OF INCREASING PEDAGOGICAL STAFF PROFESSIONAL COMPETENCES OF THE SYSTEM OF HIGHER EDUCATION

*Ts. Zh. ASATRYAN*

The article touches upon the issue of improving lecturers' professional competences as an important prerequisite of education quality assurance. The author of the article briefly touches upon viewpoints of different specialists related to pedagogical staff professional modelling trying to organize and clarify requirements for university professors and professional competences derived from these requirements.

# ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԱԾԱԿԱՆ ՈՐՈՇՉԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

**Ս. Կ. ԽԱՆԴԱՆՅԱՆ**
*ԳՊՀ դասախոս*

Հայտնի է, որ հարաբերական ածականներն արտահայտում են ոչ անմիջական, միջնորդավորված հատկանիշ, ինչպես՝ ուսանողական, բրդյա, գիշերային և այլն: Այստեղ հատկանիշն արտահայտված է առարկայական հարաբերությամբ: Բայց կան մի շարք ածականներ, որոնց մեջ հատկանիշն արտահայտվում է գործողության հետ ունեցած հարաբերությամբ, ինչպես՝ սիրելի, ատելի, գովելի, զգայուն, դյութիչ և այլն: Այս տիպի ածականների մեջ ևս հարաբերություն է արտահայտվում, «…միայն գործողության հետ ունեցած հարաբերություն: Բայց այն բանի շնորհիվ, որ գործողությունն ինքը հատկանիշի դրսևորումներից մեկն է, բայականզմ ածականների մեջ, որպես կանոն, հարաբերության նշանակությունը գերիշխող ու հիմնական չէ, և վերջիններս մոտենում են սովորական որակական ածականներին: Ուստի և, ըստ երևույթին, հարաբե-

րական պիտի համարել միայն այն ածականները, որոնց մեջ հատկանիշն արտահայտվում է առարկայական հարաբերությամբ /աշակերտական, լեռնային, փայտյա»[1]:

Մ. Ասատրյանը գտնում է, որ հարաբերական ածականների մեջ դրսևորվում է երկու իմաստ՝ «առարկայական հարաբերության իմաստ և հատկանշային-որակական իմաստ». մայրական սեր, լեռնային լճակ, բրդյա կտոր կապակցություններում մայրական, լեռնային, բրդյա ածականները ցույց են տալիս հարաբերություն մոր, լեռան, բրդի նկատմամբ, մյուս կողմից էլ այդ ածականները բնորոշում են սեր, լճակ, կտոր գոյականները որակային տեսակետից: Սահմանելով հարաբերական ածականների նշանակությունը՝ ավելացնում է, «որ նրանք արտահայտում են հարաբերություններ ածականի նյութական բովանդակությունը դրսևորող առարկաների /գոյականների/ նկատմամբ»[2]:

Յու. Ավետիսյանի, Հ. Ջաքարյանի «Հայոց լեզու. Ձևաբանություն» գրքում առաջարկված է հարաբերական ածականների այսպիսի սահմանում և դասակարգում. «Հարաբերական ածականը ցույց է տալիս ինչ-որ մի առարկայի հետ հարաբերությունը՝ որպես տվյալ առարկայի հատկանիշ:

Այսինքն՝ հարաբերական ածականը ցույց է տալիս առարկայի՝

- ինչից լինելը՝ երկաթյա դուռ, ոսկեկուռ խաչ, բրդե վերմակ,
- ինչին կամ ում վերաբերելը՝ արձակուրդային վճար, ամանորյա հանգիստ, ուսումնական ծրագիր,
- ինչին կամ ում պատկանելը՝ համայնքային հողեր, հայրական տուն, վանքապատկան գյուղ,
- որ տեսակին պատկանելը՝ ավարտական դասարան, ջրային կենդանի, համազոր լրացումներ,
- ինչին կամ ում բնորոշ լինելը՝ հունվարյան սառնամանիքներ, կանացի շարժուձև, մարդկային խիղճ, սարյանական ոճ և այլն»[3]:

Մեզ այս պահին հետաքրքրողը լեզվաբանների առաջարկած հարաբերական ածականներին վերաբերող դասակարգումը չէ: Մեր նպատակն է դիտարկել հարաբերական ածական որոշիչ ունեցող գոյականական բառակապակցությունները, ցույց տալ, թե կյանքի տարբեր իմաստային բնագավառներն ընդգրկող այս բառերն ինչ իմաստային դաշտերում և տարատեսակ շերտերում են հանդես գալիս: Եթե փորձենք այս բառակապակցությունները դասակարգել ըստ իրենց բովանդակության և իմաստային դրսևորումների, կնկատենք, որ սրանց գործածության դաշտն ավելի մեծ ու լայն է, քան որակական ածական որոշիչ լրացում ունեցող գոյականական բառակապակցություններինը: Կարող ենք ասել, որ հարաբերական ածական որոշիչով գոյականական բառակապակցություններն ունեն կրկնակի ավելի շատ իմաստային խմբեր, քան որակական ածական որոշիչ լրացում ունեցող գոյականական բառակապակցությունները:

Ստորև կփորձենք ներկայացնել հարաբերական ածական որոշիչ ունեցող գոյականական բառակապակցություններն ըստ հնարավոր խմբավորումների:

---

[1] ***Մ. Ասատրյան,*** Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանություն, Եր.,1983, էջ 141:

[2] Նույնը, էջ 142:

[3] ***Յու. Ավետիսյան, Հ. Ջաքարյան***, Հայոց լեզու. Ձևաբանություն, Եր., 1983, էջ 50:

- Տեղի հատկանիշ արտահայտող բառեր- դաշտային աշխատանք, ծովափնյա քաղաք, արտասահմանյան ուղեգիր, ցամաքային կենդանի, Կովկասյան լեռներ, գյուղական համայնք, քաղաքական ուժ, լեռնային գոտի, ջրային թռչուն, տեղացի բնակիչ, երկրացի հյուր:
- Տարածական հատկանիշ արտահայտող բառեր- Հյուսիսային պողոտա, արևելյան խոհանոց, երկրային էակ, երկնային մարմին, հասարակածային կտրվածք, հորիզոնական գիծ, ուղղահայաց /զուգահեռ/ փողոց, բարձրաբերձ լեռներ, զարտուղի ճանապարհ, լայնարձակ դաշտեր, շրջապատող լեռներ, հանդիպակաց լեռ:
- Կառուցվածքային հատկանիշ արտահայտող բառեր- բարձրահարկ շենք, երկհարկանի շինություն, գմբեթարդ տանիք, կամարաձև կամուրջ, սնամեջ պատ, գոգավոր հարթություն, ուռուցիկ տարածք, խորունկ կիրճ, վերասլաց կառույց, երկնաքերծ շենք, քանդակազարդ ձեղուն, կիսաշրջանաձև թատրոն, հրաշակերտ շինություն:
- Ծավալային հատկանիշ արտահայտող բառեր- հաստաբուն կաղնի, մասսայական կոտորած, զանգվածային հարց, ժողովրդական զանգված, մեծածավալ կտրվածք, ծավալուն աշխատանք, անծայրածիր տայգա, հսկայական բանակ, գաճաճ ծառ, աժդահա լեռներ:
- Քանակային հատկանիշ արտահայտող բառեր- բազմաքանակ տեսականի, հաճախակի հանդիպումներ, բյուր աստղեր, բազում օրեր, անթիվ թշնամի, անհամար հաղթանակներ, բազմահազար հարցեր, սակավ դեպքեր:
- Կազմվածքային հարաբերություն արտահայտող բառեր- նիհարավուն աղջիկ, բարձրահասակ երիտասարդ, թիկնեղ մարզիկ, մկանուտ թևեր, ատլետիկ կեցվածք, հաստաբազուկ բանվոր, մկանուտ մարմին, ջլուտ ձեռքեր:
- Ազգային հարաբերություն արտահայտող բառեր- հայկական հարց, ռուսական ձմեռ, գնչուական սեր, գոթական ոճ, իտալական սպագետի, հռոմեական կրթություն:
- Ազգակցական հարաբերություն արտահայտող բառեր- հայրական ապտակ, մայրական խնամք, եղբայրական զրույց, պապենական խոսք, բարեկամական կապ, խնամիական հարաբերություն, հարսանեկան արարողություն:
- Ծագման հարաբերություն արտահայտող բառեր-ազնվազարմ ծագում, բարձրատոհմիկ հասարակություն, քաղքենի պահվածք, գյուղական սովորույթ, բուսական կեր, թագավորական ծագում, միաբջիջ կենդանի, զտարյուն բարեկամ, անխառն ծնունդ:
- Ժամանակի հատկանիշ արտահայտող բառեր- ամառային արձակուրդ, ձմեռային օլիմպիադա, ցերեկային հանգիստ, նախնադարյան հասարակարգ, ավատատիրական կարգեր, հնադարյան իր, գիշերային աշխատանք, առօրեական հոգսեր, այժմեական հարց, տասնամյա /հնգամյա…./ տղա, ամանորյա նվեր, մշտնջենական լռություն, նախորդ / հաջորդ/ տարի, հինավուրց ամրոց, տևական դադար:
- Տարիքային հարաբերություն արտահայտող բառեր- մանկական խաղ, երիտասարդական ուժ, ծերունական հիվանդություն, պատանեկան հրապուրանք, հասուն մարդ, չափահաս /անչափահաս/ տղա, դեռահաս աշխատակից, տարեց քահանա, զառամյալ հայրիկ, դեռատի օրիորդ:

● Սեռային հարաբերություն արտահայտող բառեր- կանացի երջանկություն, տղամարդկային պահվածք, օրիորդական հրապույր, տղայական երդում, աղջկական ամաչկոտություն:

● Որոշ ամսանունների և շաբաթվա օրերի անվանումների հարաբերություն արտահայտող բառեր- հունվարյան տոներ, մայիսյան վարդ, ապրիլմեկյան կատակ, կիրակնօրյա դպրոց, շաբաթօրյա հանգիստ, Հոկտեմբերյան հեղափոխություն:

● Հատկացական հարաբերություն արտահայտող բառեր- մարդկային հարաբերություններ, ազնվական ծագում, թագավորական գահ, օտարոտի ժպիտ, գազանային պահվածք:

● Վերաբերության հարաբերություն արտահայտող բառեր- սիրալիր վերաբերմունք, ջերմ հարաբերություններ, բարեհամբույր ընդունելություն, հյուրընկալ տիկին:

● Պատկանելիության հարաբերություն արտահայտող բառեր- ուսանողական հավաք, աշակերտական նստարան, դպրոցական պայուսակ, բանվորական շոր, բժշկական դանակ, մանկական հագուստ, զինվորական համազգեստ:

● Ունենալու-չունենալու հատկանիշ արտահայտող բառեր- ակնոցավոր բժիշկ, անտուն մուրացկան, անհոգի հարս, անպոչ գդալ, գիսավոր աստղ, նրբաճաշակ օրիորդ, միրուքավոր ծերուկ, հրացանավոր պահակ, անխելք մարդ, միաչքանի հրեշ, յոթգլխանի վիշապ, ոսկեպախուրց նժույգ:

● Կազմության հարաբերություն արտահայտող բառեր-մոլեկուլյար շարժում, ատոմային կառուցվածք, բջջային հետազոտություն, երփներանգ ծաղիկներ, խայտաճամուկ ամբոխ, զանազան մանրուք, այլազան ապրանքներ:

● Նյութի հարաբերություն արտահայտող բառեր, որոնք ունեն կազմության իմաստ. սրանց մի մասն ունի զուգահեռ ձևեր- արծաթե // արծաթյա գդալ, ոսկե // ոսկյա զարդ, Սառցե թագուհի, թղթե տնակ, երկաթե // երկաթյա դարպաս, հողե տանիք, թիթեղյա վառարան, ջրոտ ձեռքեր, արյունոտ դեմք, ճահճային տիղմ, պողպատյա վահան, արծաթազարդ գոտի, ներկոտ սեղան:

● Նյութի ֆիզիկական վիճակի հատկանիշ արտահայտող բառեր- բյուրեղային կառուցվածք, ապարային շերտ, մթնոլորտային ճնշում, օզոնային գոտի, գազային վիճակ, գոլորշիացած հեղուկ, կաթիլային մնացորդ:

● Զգայական օրգանների կողմից ընկալվող հատկանիշ արտահայտող բառեր.

ա/ տեսողական օրգանների կողմից ընկալվող հատկանիշ արտահայտող բառեր- հրաշեկ վարսեր, գեղագանգուր մազեր, կամարածև հոնքեր, բարձրահարկ շենք, ծյունաճերմակ կատար, մթամած երկինք, դյութիչ տեսարան, լուսնկա /մթնկա, պարզկա/ գիշեր, գողտրիկ անկյուն, թրթռացող լույս, ակնդետ հայացք, դողդոջուն ձեռք, բացահայտ արարք, ակներև գործողություն,

բ/ լսողական օրգանների կողմից ընկալվող հատկանիշ արտահայտող բառեր- քաղցրահնչյուն ծայն, բարեհնչյուն պատասխան, ամպագոռգոռ խոսք, բարձրաձայն երաժշտություն, ողբանվագ լաց, քչքչան առվակ, որոտընդոստ ծայն,

գ/ շոշափող օրգանների կողմից ընկալվող հատկանիշ արտահայտող բառեր- բրդյա գործվածք, թավշյա տերև, սրաշեղբ դանակ, անհարթ մակերես, ծաղկա-

տար դեմք, չեչոտ երես,

դ/ հոտոտելիքի օրգանների կողմից ընկալվող հատկանիշ արտահայտող բառեր- անուշաբույր օծանելիք, վարդաբույր մաշկ, բուրավետ ծաղիկ, արևահոտ միս, գարշահոտ փողոց, գրգռիչ /ախորժակաբեր/ հոտ, զգլխիչ բուրմունք, զովաշունչ երեկո,

ե/ համտեսի օրգանների կողմից ընկալվող հատկանիշ արտահայտող բառեր- կծվահամ կարագ, դառնահամ գինի, թթվաշ լավաշ, համեղ թխվածք, հյութեղ ծիրան, արևավառ չիր, քաղցրահամ արքայանարինջ, ծխաբույր հաց:

- Զգացողության հարաբերություն արտահայտող բառեր- անկուշտ տանուտեր, անհագ կարոտ, կամավոր /կամային/ արարք, ակամա քմծիծաղ, կարոտալի ժպիտ, տենչալի էակ, քնատ վիճակ, ցանկալի արարք:
- Հարաբերություն արտահայտող բառեր- սարսափելի դեպք, ուրախալի լուր, նախանձելի տեսք, հուսահատ վիճակ, վախենալի պատմվածք, պանծալի արարք, սարսռեցուցիչ քամի:
- Սննդի և սննդամթերքների անունները բնութագրող հատկանիշ արտահայտող բառեր- բուսական յուղ, կենդանական ճարպ, ճարպային շերտ, կաթնային սերուցք, սննդարար կերակուր, վիտամինային սնունդ, յուղալի պատառ, ծովային կաղամբ, բանջարեղենային /մրգային/ աղցան:
- Բնության և ֆիզիկական երևույթները բնութագրող հատկանիշ արտահայտող բառեր- անձրևային եղանակ, ձյունոտ օր, մառախլապատ երեկո, արևային անձրև, լուսնային օրացույց, քամոտ օր, ցրտոտ ձմեռ, տաքոտ ամառ, կարճատև քամի, տևական անձրևներ, թխպոտ ցերեկ, հորդառատ տարափ, ամպոտ եղանակ, անամպ երկինք:
- Որոշ հավատալիքների անվանումներ բնութագրող հատկանիշներ արտահայտող բառեր- տերունական աղոթք, աստվածային շնորհ, օրհնյալ տեր, երկնային էակ, հրեշտակային կերպարանք, անիծյալ օր, կրոնական հայացք, աղանդավոր վկա, հավատացյալ հասարակություն, Առաքելական եկեղեցի, բողոքական կաթոլիկ:
- Գույների անուններ մատնանշող բառեր, որոնք կազմվում են «գույն» արմատի միջոցով- նարնջագույն զգեստ, մոխրագույն պատ, գազարագույն մատիտ, երկնագույն աչքեր, եռագույն դրոշ, կպրագույն ջուր, շառագույն լուսին:
- Գույների որոշակի հարաբերության հատկանիշ արտահայտող բառեր- կարմրավուն մաշկ, կանաչավուն շոր, կապտաթույր երկինք, լաջվարդ շապիկ:
- Մարդու արտաքին հատկանիշներն արտահայտող բառեր- մազոտ դեմք, միրուքավոր ֆիդայի, բեղավոր տղա, անմազ այտեր, միաչքանի ավազակ, ճաղատ գլուխ, արծվաքիթ հայ, հաստամռութ նեգր, հոնեղ երաժիշտ, բարձրահասակ երիտասարդ, պարթև սպա:
- Մարդու ներքին հատկանիշներն արտահայտող բառեր- հոգեկան խանգարում, խելացի պատասխան, զգացմունքային հարց, անձնական խնդիր, հեգնական տոն, անհնազանդ երեխա, արհամարհական ժպիտ:
- Բնավորության հատկանիշ արտահայտող բառեր- նախանձավառ հակառակորդ, քինախնդիր թշնամի, սուտասան ծառա, փչան պահակ, լեզվանի աղջիկ, քննախույզ հետախույզ, կենսաթրթիռ երեխա, ժրաջան մանկիկ, ապերախտ հարևան, պարծենկոտ աշակերտ, նեղացկոտ հարս, հնազանդ հիվանդ, կամա-

կոր երեխա, շատախոս /քչախոս/ հարևան, պարկեշտ երիտասարդ, լռակյաց գաղթական, թուլամորթ վկա:

- Բարոյական հատկանիշ արտահայտող բառեր- առաքինի տիկին, անբարո վարք, վեհանձն ամուսին, անառակ որդի, խստաբարո հայր, օձաբարո կին, հյուրընկալ տիրուհի, սիրալիր ընդունելություն:
- Հոգեկան հատկանիշ արտահայտող բառեր- խելագար սիրահար, դիվահար Դանիել, հոգեցունց միջադեպ, հուսահատ ճիչ, սրտապատառ բացականչություն, խաղաղամոլ ընկեր, հոգեհմա երաժշտություն, հաջողակ օր:
- Մտավոր հատկանիշ արտահայտող բառեր -/ան/գրագետ մարդ, տառաճաճաչ երեխա, երաժշտագետ աղջիկ, իմաստալի խրատ, իմաստակ ուսուցիչ, անհասկացող տղա, թեթևսոլիկ աղջիկ, թերուս աշխատակից, սին հայացք, նաիվ մտածողություն, սնոտիապաշտ տատիկ, անխելք արարք, խելացի երեխա, ուսյալ աշակերտ:
- Մարդու գործունեությունը բնութագրող հարաբերություն արտահայտող բառեր-ֆիզիկական աջակցություն, դրամական պարգև, անլուծելի հարց, արդարամիտ որոշում, անելանելի վիճակ, անորոշ դրություն, բարձրագույն կրթություն, հարևանցի հայացք, բարոյական օգնություն, ֆինանսական աջակցություն, ազդու ձայն:
- Մարդու կողմից արժևորման հարաբերություն արտահայտող բառեր-բարենպաստ պայմաններ, բարեկեցիկ կյանք, նպաստավոր ազդեցություն, արհամարհական ժպիտ, քննախույզ/ս/ հայացք, մանրազնին ուսումնասիրություն, հոգևոր երաժշտություն:
- Դրության, վիճակի հարաբերություն արտահայտող բառեր- կիսաբաց պատուհան, ձուլածո մետաղ, կոփածո առարկա, բոլորակ շենք, անտուն բանվոր, անսիրտ արարք, տարօրինակ արարած, քնատ հիվանդ, գունատ երեխա, կորովի զինվոր, շինծու ժպիտ, ծալովի դանակ, տարօրինակ կին, վառվող մարխ, տանջալլուկ /սովալլուկ/ նահատակ, բնական ամրություն, անօթևան ճամփորդ, մազապուրծ որբ, անխաթար շինություն, անվնաս հարևան, մեկուսի կենցաղ, առանձին բնակարան, բոկոտն մանկիկ:
- Մարդու և կենդանիների գոյավիճակ արտահայտող բառեր- կենդանի վիճակ, որբևայրի կին, սատկած շուն, մենակյաց ծերուկ, ոխերիմ թշնամի, մտերիմ ընկեր, բաժանված կին, նշանված աղջիկ, անտեր/տերով/ շուն, թափառական երաժիշտ, վայրենի հայացք, ցանուցիր ոչխար, մուրացիկ արտաքին:
- Հասարակական ընկալում արտահայտող բառեր-կարկառուն դեմք, վայելչագեղ օրիորդ, բարձրահասակ պատանի, սարսափազդու միջադեպ, անհարգալից վերաբերմունք, հյուրամեծար տանտեր, կնամեծար տղամարդ, արտառոց դեպք, հիասքանչ պատկեր, քաղաքավարի պահվածք, խրոխտ հայացք, ըմբոստ բնավորություն, անառիկ բերդ, քաջազուն արքա, խուճապահար ամբոխ, փառասեր տիկին:
- Արժևորման հատկանիշ արտահայտող բառեր- թանկարժեք նվեր, էժանագին հագուստ, կարևոր իր, գերազանց գնահատական, ժառանգական հատկանիշ, ազգային տարազ, քանքարավոր ընկեր, տաղանդավոր երաժիշտ, հարգարժան բարեկամ, հանճարեղ մանուկ, հանրաճանաչ բանաստեղծ:
- Մարմնի մասեր և օրգաններ ցույց տվող բառերից կազմված ածական-

ներ–սրտային անբավարարություն, քմային արտասանություն, գանգուղեղային ճնշում, ստամոքսային /սրտամկանային/ կծկումներ, թոքային /կոկորդային/ հազ, աղիքային վարակ, զարկերակային ճնշում, միաչքանի վիշապ, չորքոտանի կենդանի:

- Բժշկության մեջ գործածվող տերմինների և անվանումների հարաբերություն արտահայտող բառեր- վերականգնողական կենտրոն, հիպերտոնիկ հիվանդ, ախտածին վիճակ, պաշտպանական ռեակցիա, ռեանիմացիոն բաժանմունք, օրթոպետիկ հետազոտություն, բժշկական դանակ, օպտիակական /արևային/ ակնոց:
- Տեխնիկական սարքավորումների, ապարատների անվանումներ ցույց տվող բառերից կազմված ածականներ- մագնիսական դաշտ, լարովի ժամացույց, հեռախոսային խոսակցություն, մարտկոցային միացում:
- Տարբեր մասնագիտություններ և գիտաեզրեր բնութագրող ածականներ, որոնք ունեն մասնական իմաստ- նկարչական ալբոմ, երաժշտական գործիք, իրավաբանական խորհուրդ, իրավական հիմք, ֆինանսական հարաբերություններ, բանասիրական ուսումնասիրություններ, վիպական կերպար, դատական նիստ, Սահմանադրական դատարան, բաղհյուսական բարդություն, բաղադրյալ հատուկ անուն, նախադաս /ստորադաս, համադաս/ անդամ, դիալեկտիկական մատերիալիզմ, փոփոխական /հաստատուն/ հոսանք, մագնիսական դաշտ, վիրտուալ ուսուցում, երկրաչափական պատկեր, ատոմային էներգիա, միջուկային ռեակցիա:
- Արվեստի որոշ ճյուղերին վերաբերող բառեր- արվեստասեր հասարակություն, մշակութային կյանք, ժողովրդական երգեր, դասական երաժշտություն, գրաֆիկական աշխատանք, թատերական ներկայացում, վավերագրական կինոնկար, տիկնիկային թատրոն, մուլտիպլիկացիոն ֆիլմ, ջազային ստեղծագործություն, էստրադային երգ, հյուսկեն /ցանցկեն/ գործվածք, գրական-երաժշտական երեկո:
- Բաղադրյալ հատուկ անուններում- Արևմտյան Հայաստան, Միջին Ասիա, Հարավային Ամերիկա, Ներքին Կարմիրաղբյուր, Հեռավոր Արևելք, Մերձավոր Արևելք, Բյուզանդական կայսրություն, Կովկասյան լեռներ, Ուրալյան լեռներ, Միջերկրական ծով, Կուրիլյան կղզիներ, Հյուսիսային սառուցյալ օվկիանոս, Ատլանտյան /Հնդկական/ օվկիանոս, Բերմուդյան եռանկյունի:
- Որպես վերնագրեր հանդես եկող հատուկ անուններում- «Ալպիական մանուշակ», «Դանթեական առասպել», «Հայկական էսքիզներ», «Հավերժական սեր», «Անգլուխ ձիավորը», «Պոչատ աղվեսը», «Սենտիմենտալ երգ», «Հերկած խոպան», «Չախորդ Փանոսը», «Պարծենկոտ մկնիկը»:
- Հատուկ անուններից և ազգանուններից առաջացած հարաբերություն ցույց տվող ածականներ- Մաշտոցյան գիր, Հայկյան աղեղ, Տերյանական օրեր, Չարենցյան ընթերցումներ, Թումանյանական տարի, Շեքսպիրյան հարց, Մոսկովյան փողոց, Արարատյան դաշտ, Մաշտոցյան շարականներ:
- Դարձվածքներում և դարձվածային արտահայտություններում հանդես եկող ածականներ – Բարդուղիմեոսյան գիշեր, Գալլիական աքաղաղ, Գասպարյանի շարադրություն, գերեզմանային լռություն, ընտանեկան դրամա, արկադյան սոխակ, լաբալիսյան արտադրություն, արգելված պտուղ, ատտիկյան աղ,

սիդոնյան ծիրանենի, արծաթյա հարսանիք, պլատոնական սեր, աքիլլեսյան գարշապար:

- Կրթական հաստատությունների անվանումներ արտահայտող բառեր-Լազարյան ճեմարան, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Լեզվաբանական ինստիտուտ, ֆիզիկա-մաթեմատիկական դպրոց, Թատերական ինստիտուտ, երկարօրյա դպրոց, գիշերօթիկ դպրոց, երեկոյան ուսուցում, վիրտուալ համալսարան:
- Ջինվորական կոչման հարաբերություն արտահայտող բառեր - շարքային զինվոր, զինվորական կոչում, սերժանտական դպրոց, կուրսանտական դասընթացներ:
- Ջինատեսակների անվանումներ ցույց տվող բառեր- հրազենային վերք, տանկային դիվիզիա, հրետանային կրակ, զրահավոր տանկ, նիզակավոր մարտիկ, հակաօդային ուժեր, ականակիր նավ:
- Կուսակցությունների, հասարակական տարբեր կազմակերպությունների, հիմնարկ-ձեռնարկությունների անվանումներ արտահայտող բառեր- Ազգային Ժողով, Հանրապետական կուսակցություն, Դաշնակցական կուսակցություն, Ազգային անվտանգության խորհուրդ, Միավորված ազգերի կազմակերպություն, Ժողովրդական կուսակցություն, Կոմունիստական կուսակցություն:
- Վերացական գոյականներից առաջացած ածականներ-սիրային կապ, խղճալի վիճակ, ցավալի լուր, անկումային դրություն, հրաշալի գործ:
- Ածականի և գոյականի հատկություններ զուգակցող բառեր- կախարդ տատիկ, հիվանդ մարդ, մանուկ հասակ, պանդուխտ տղա, որբ մանուկ, էգ առյուծ, բաղաձայն /ձայնավոր/ հնչյուն, իմաստուն խոսք, կտրիճ զինվոր, շարժիչ ուժ, առևտրական հարաբերություններ, դպրոցական երեխա, վիրավոր կենդանի, կենդանի դիակ, հանցագործ աշխարհ, շատախոս աղջիկ, սուտասան ծառա, բթամիտ հայացք:
- Ածականի և գոյականի հատկություններ զուգակցող բառերից առաջացած հարաբերական ածականներ- կախարդական փայտիկ, ուսանողական առօրյա, մանկական հագուստ, հրաշալի ֆիլմ, հիվանդագին սեր, իմաստային միավոր:
- Թվականներից կազմված հարաբերական ածականներ- միակ որդի, երկամսյա դասընթաց, տասնամյա կրթություն, քսանական թվականներ, հինգերորդական մաս, քառորդ ժամ, տասնորդական մաս, տասական տետր:
- Ածականական կիրառությամբ մակբայ որոշիչներ- կամաց կանչ, վերին շնչուղիներ, ներքին օրգաններ, ստորին դաս, միջին խավ, անդադար հարցադրումներ, ապօրինի /օրինական/ գործարք, գաղափարապես համախոհ, մեթոդապես հմուտ, կրկնապատիկ սեր, սրտանց խոսք, երեսանց հայացք, կողքանց միջամտություն, լալագին խնդրանք, ցավագին վերաբերմունք, հիվանդագին ուշադրություն, հաճախակի հանդիպումներ, հավետ սեր, ի ծնե որբ, ի բնե առողջ, վաղուց ծանոթ, հնուց հայտնի:
- Գրաբարի դերբայական ձևերից առաջացած ածականներ.

ա/ Ի-ով վերջավորվող ապառնի դերբայից առաջացած ածականներ- սիրելի մայրիկ, գովելի արարք, զարմանալի պատասխան, տեսանելի դաշտ, ընդունելի ձև, նկատելի առաջընթաց, ուսանելի մեթոդ,

բ/ ԻՉ-ով կազմված ենթակայական դերբայից առաջացած ածականներ- կի-

զիչ արև, համոզիչ խոսք, բուժիչ միջոց, ապականիչ ուժ, կեղեքիչ ուժեր, փրկիչ ծրագրեր, մատնիչ պահվածք /վերջին երկուսը ունեն գոյականական արժեք/,

գ/ ՅԱԼ /ԵԱԼ/-ով ձևավորված անցյալ դերբայից առաջացած ածականներ- Սառուցյալ օվկիանոս, Մեռյալ ծով, անցյալ տարի, վերոհիշյալ բառեր, տվյալ պահ, հիշյալ օրինակ, ննջեցյալ հայր, ամբաստանյալ եղբայր, մեղադրյալ Պողասյան, լքյալ որդի:

- Ժամանակակից հայերենի դերբայական ձևերից առաջացած ածականներ.

ա/ հարակատար դերբայից առաջացած ածականներ- պաշարված քաղաք, թրծված հոգի, սիրած էակ, հոգնած բանվոր, դատապարտված բնակիչ, տաշած քար, հղկված հոգի, տատամսած հայացք, կոտրած բաժակ, նվիրված երազ, հափշտակած ապրանք /շատ հարակատար դերբայների մեջ հատկանշային նշանակությունը գերիշխող է դարձել, որի հետևանքով էլ նրանք ազատորեն համեմատության աստիճաններ են կազմում, ինչպես՝ զարգացած-ավելի զարգացած-ամենազարգացած, կրթված-ավելի կրթված-ամենակրթված և այլն/,

բ/ անորոշ դերբայի սեռական հոլովածներ, որոնք ունեն որոշչային կիրառություն-գրելու թուղթ, ասելու բան, անելու գործ, խմելու ջուր, թափելու ճաշ, կարդալու գիրք, սովորելու դաս, եփելու միս, ուտելու հաց, չորացնելու միրգ,

գ/ ենթակայական դերբայից առաջացած ածականներ- սավառնող արծիվ, թափառող մուրացկան, հոսող արցունքներ, երևացող արև, ժպտացող աչքեր, խոսող վկա, լացող ուռի, փթթող վարդ, սովորող երեխա, հասկացող ուսանող, հավատացող մայր, ուրացող քրիստոնյա:

- Որակական ածականի կիրառությամբ հանդես եկող հարաբերական ածականներ- նյարդային հիվանդ, մարդկային հատկանիշ, բարեկամական հարաբերություններ, ահավոր արարք, գլխավոր գիծ, ականավոր գործիչ, գործնական հանդիպում, արժանի պատիժ, շնորհալի երգիչ, պանծալի արարք, պիտանի սնունդ, նպաստավոր պայմաններ, շահավետ գործարք:
- Ժողովրդախոսակցական բառեր- հոժար կամք, խելագար թափառաշրջիկ, շվար ծառա, շրխկան դուռ, շփշփան անձրև, չկամ ընկեր, չմահավան աղջիկ, պնչո ռուս, ջոկած հատիկ, ջանջալ մարդ, լաքոշ բերան, սարսառ դեմք, լափազ բերան, խլվլան երեխա, լոլոզ բոյ, լալկան կնիկ, սրտապատառ լաց, լոդր հարս:
- Գրաբարյան ձևեր-լայնկեկ /լայնկուկ/ հանդերձանք, կարմիրկեկ ծաղիկ, հյուսկեն մազեր, ծակոտկեն գործվածք, արքունի պալատ, տերունի խոսք, օրիորդաց վարժարան, հայոց հարց, տոհմիկ երգ:
- Օտարաբանություններ-պոլիտեխնիկական ինստիտուտ, մոնումենտալ շինություն, լակոնիկ ոճ, գենդերային հարաբերություն, իդեալական տեսք, պաթետիկ ստեղծագործություն, պրևենտիվ /նախապաշտպանական/ ռեակցիա, պրոֆեսիոնալ մասնագետ, ռացիոնալ լուծում, ռեալ հարց, սինթետիկ կտոր, սիմվոլիկ նշան, արիստոկրատական ծագում:
- Հեղինակային նորաբանություններ-արևանման ծաղիկներ, հեզաճկուն պար, վառման բույր, լուսացնցուղ տեսարան, մարմարակերտ գեղուհի, թավալգլոր վայրէջք, լայնալիճ աղեղ, ճաճանչափայլ տեսք, մրափած դաշտ, խորախորհուրդ լռություն, նոսր մշուշ, օդեղեն բանաստեղծություն, հայելանման մակերես, արևահամ բար, վառման բույր, անխախտ հավատ, խելահեղ ցնծություն, ճակատագրական առավոտ, սրտահույզ արարողություն, խորհրդավոր խավար, աղամանդակուռ /գոհարազարդ/ թագ:

## СПОСОБЫ ВЫРАЖЕНИЯ ОТНОСИТЕЛЬНОГО ПРИЛАГАТЕЛЬНОГО В ФУНКЦИИ ОПРЕДЕЛЕНИЯ В СОВРЕМЕННЫХ АРМЯНСКИХ СУБСТАНТИВНЫХ СЛОВОСОЧЕТАНИЯХ

*С. К. ХАНДАНЯН*

В статье представлены словосочетания с определениями, выраженными относительными прилагательными, относящимися к разным сферам жизни и составляющим разные семантические группы.

## THE PECULIARITIES OF THE RELATIVE ADJECTIVE-ATTRIBUTIVE SUPPLEMENTS IN NOMINAL WORD-COMBINATIONS

*S. K. KHANDANYAN*

The peculiarities of the adjective-attributive supplements in nominal word-combinations are presented in the article. They perform two functions -qualitative adjective and relative attributive supplement.

Different word combinations having relative adjective attributives concerning to the various spheres of life are groped according to their semantic definition.

# ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ «ԳՈՄԵՇԸ» ՎԻՊԱԿԸ

**Վ. Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**
*Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,*
*ԳՊՀ ընդհանուր գրականության ամբիոնի վարիչ*

Հայ գրաքննադատությունը բարձր է գնահատել Հր. Մաթևոսյանի «Գոմեշը» երկը: Ս. Աղաբաբյանը Գոմեշին համարում է մաքառման հերոս, «նա աշխարհի բարեկամն է և ոչ թե «օտարման» փիլիսոփայության կրողը»[1]: Կիմ Աղաբեկյանն իրավամբ առնչություններ է տեսել Մաթևոսյանի և Մ. Սարյանի բնապաշտության միջև[2], Հ. Մարգունին կարևորում է երկում առկա աշխարհի կենդանի միասնության զգացողությունը[3], ռուս քննադատությունը կարևորել է միֆական որակները[4], Վ. Յակիմենկոն Գոմեշին և Ալխոյին համարում է այլախոսականին մոտեցող կերպարներ[5], Աննինսկին դրանում նկատում է էպիկական աշխարհի փլուզման պատմությունը և այլն:

[1] ***Ս. Աղաբաբյան,*** 20-րդ դարի հայ գրականության զուգահեռականներում, գիրք երկրորդ, 1984, էջ 369:

[2] Ծմակուտի վիպասքը, էջ 181-182:

[3] Սովետահայ գրականության պոետիկան, էջ 315:

[4] ***Վ. Գուսև,*** Зовы стихи и голос века /Литературное обозрение, 1971:

[5] ***Վ. Յակիմենկո,*** «Вопросы литературы», 1978, н. 1: